Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ

ք. Երևան 15 մարտի, 2019թ.

Ժողովի նախագահ՝
Ս. Սուքիասյան - Խորհրդի նախագահ

Ժողովի քարտուղար՝
Լ. Պետրոսյան - Խորհրդի անդամ, Քարտուղար

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ /այսուհետ՝ բանկ/ հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովը կայացավ 2019թ. մարտի 15-ին՝ Խորհրդի նախագահ Ս. Սուքիասյանի նախագահությամբ:
Բանկի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել էր 2019թ. փետրվարի 06-ի դրությամբ՝ ըստ բաժնետերերի ռեեստրի տվյալների:
Համաձայն Հաշվիչ հանձնաժողովի ներկայացված տվյալների՝ Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 1,852,533 ձայնի իրավունք տվող բաժնետոմս, որից քվեարկությանը մասնակցել են 1,381,798 ձայնի իրավունք տվող բաժնետոմս կամ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 74.59%-ը:
Բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի քվեարկությանն էին դրված հետևյալ հարցերը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:
2. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ արտոնյալ բաժնետոմսերի թողարկման բաժանորդագրության արդյունքներով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կանոնադրական կապիտալը 25,635,343,200 ՀՀ դրամ հաստատելու մասին:
3. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության փոփոխված տարբերակի վերաբերյալ:

Քվեարկության ամփոփման արդյունքում հաշվիչ հանձնաժողովի թիվ 1 Արձանագրության տվյալները հետևյալն են.

1.«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,381,798 ձայն կամ մասնակիցների ձայների 100.0%
Դեմ՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0 %
Ձեռնպահ՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%
Անվավեր՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի կազմը հետևյալ տեսքով.
Նախագահ՝ Ա. Խաչատրյան
Անդամներ՝ Գ. Խաչատրյան, Ե. Ալեքսանյան
Լիազորությունների ժամկետը սահմանել մեկ տարի:

2.«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ արտոնյալ բաժնետոմսերի թողարկման բաժանորդագրության արդյունքներով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կանոնադրական կապիտալը 25,635,343,200 ՀՀ դրամ հաստատելու մասին:

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,381,798 ձայն կամ մասնակիցների ձայների 100.0%
Դեմ՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0 %
Ձեռնպահ՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%
Անվավեր՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

2. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ արտոնյալ բաժնետոմսերի թողարկման բաժանորդագրության արդյունքներով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կանոնադրական կապիտալը հաստատել 25,635,343,200 ՀՀ դրամ:

3.«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության փոփոխված տարբերակի վերաբերյալ:

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,381,798 ձայն կամ մասնակիցների ձայների 100.0%
Դեմ՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0 %
Ձեռնպահ՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%
Անվավեր՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

3. Հաստատել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության լրամշակված տարբերակը:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ /Ս.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ/

ՔԱՐՏՈՒՂԱՐ / Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/